

Այսպէս բարեկենդան ստուգաբանուում է բարի-կենդանութիւնը բառերով, մինչդեռ սրբ։ բարդանդան ոչ մի մեկնութիւն չունի. ուստի պարզ է որ բառը հայերէն է և հետեւաբար փոխառուն պարսկերէնն է։ Նայնպէս արդի պրո։ ծամբալա, ուումբալիլս և մի տեսակ չամանօ, որ պարսկերէնով ոչ մի մեկնութիւն չունի, կարող է ստուգաբանուել հյու և ներքանդ ձեռով, ուստի և հաշյայերէնից է անցել պարսկերէնի։ Աղիւս բառը՝ որ կայ նաև սրբ։ ախիզ ձեռով, անշնչառ հայերէն է, որովհետեւ միայն հայերէն և ձայնն է։ որ տալիս է դ, որից և իս (պրո. իս), իսկ պրո։ իս ձայնը չի կտրող բնաւ գառնալ և Սրանից հետեւում է թէ պարսկերէնն է որ փոխ է առել մեջանից աղիւսը, ինչպէս որ նոյնը փոխ են առել նաև վրացիք աւելի հին ժամանակ և գործրել ալիզի։

Յբա տեսակի բառերը իրենց զիւրութեան, իսկ Գբա տեսակի բառերը իրենց սակաւութեան պատճառով մի կողմ թողնելով՝ ուշազրութեան առնենք 1-ին և 2-րդ տեսակի բառերը, որոնք թէ քանակութեամբ շատ են և թէ իրենց կնճռութեամբ տեղիք են տուել խոշոր թիւրիմացութիւնների՝ նոյն իսկ լեզուաբանների մէջ։ Իրօք ի՞նչպէս կարելի է խմանալ թէ որ. առ, այրել, պատիեր, նկար, արծար, արջ, բեռն ևն բառերի մէջ, որոնք այնքան նման են պահաւերէն առուր, պատկար, նիկար, ըրբատա, արլաւ, պրո։ բար բառերին, որո՞նք են զուտ հայկական և որոնք են պարսկերէնից փոխառեալ։

ՊՐՈՅ. Հ. ԱՃԱՌԵԿՆ

(Հայունակելէ)



ԴՐԻԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿԱԲԱՅ

ԽԵ

(Եղիազար կարողիկոս Հայկելի առ Եղիա եպիսկոպոս յերուապել) (*):

Օրհնութեամբ ծանիք, Տէր Եղիա պարունակը և մահանուխ Վարդան, որ այս մեր Սաֆարն ի տեղի հասած օրն զինչ քսուր գրեանք և էմրէր որ բերեց ընդ իւր զրով և մօհրով՝ իւրմէն առնէք և պահէք, մինչ զինչ զրեցից՝ այնպէս առնիցէք և իւրեան քսան զուռուշ տայք, և յառաջմանէ թէ՛ մինքն և թէ իւր տանն փաղ ինչ տուեալ էք՝ չիիչէք, զի մեզ էմաքտէր է, և ի մեր ձեռն զատ մի չկար որ իւրեանն տայտք, մնաց մեր գրան պախի, և ձեզ Սատուծով ի մօտոյ թաւղթ զրելոց եմք, զի սա անդեպ ժամու ել ի ճանապարհ, նա՛ և զամենայն ինքն զիտէ զեղեալն մեր և սուտն աւելիի։ Եւ Մուրատոն թէ մնայ ի հոտ, լաւութեամբ ընկալարուեք, զի շատ աշխատեցաւ, և ի զործ ինչ կացուցէք, և թէ զնայ՝ Տէր առ ինքն և առ ամենեսեանդ. բաւեսցի։ Յաւտար երկիր իւրաքանչիւր զլուխնուն չափ թող ուտեն բաց ի մին մատէն իւրեանց զրած թղթերովն. զիս իմ ցաւս թողէք. բաւ է, և զձեր աչքն իր Տանձըմիս առնէք, զի էմէքտար է ի վերայ մեր։

ԽԶ

(Յովիան եպիսկոպոս Ադրիանուպոլէն առ Եղիազար կարողիկոս ի Հայկել) (**):

Գերափառ և հրաշաղարդ, վումափառ և մեծապատիւ հանճարեղութեամբ զերերեւեալ տէրութեամբ, համայնից սիրելի և բազմաց յանկալի տեառնդ մերոյ Եղիազար սրբազն կաթողիկոսի, վերատեսուչ և առաջնորդ սուրբ յերուաղէմայ մեր հայոց աղզի։ Նուաստ ծառայ Անդրիանոյ Յօհան

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնազիրն է. «Նոյեմբերի ժԴ. Տանձըմին մետ յերուապել զրկած զրին սուրաթն է»։

(**) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնազիրն է. «Դիմու այս յինքնազրոշմն թուին, եհաս առ մեզ չորերտասան կնրիւր բաղարին և կնրիւր Յօհան նպիսկոպոսին, զոր կայ եղեալ յարկեղս։ Շատայ տեսան Սուրբա վկայեմ զայօ»։

հայտագոյնէ, միաբան քահանայից և երիցին խանաց, առ հասարակ ժողովրդինէ ծունը և երկրպագութիւն մատուցի սրբութեան վեհիզ, զոր և խնդրելով խնդրեմք յամենազօրէն յԱսուծոյ զի առանց պատահարից և թարց սայթաքանաց պահեսցէ զօրբութիւնդ ըստ իւր բարերար կամացն և վասն մեր պարձանաց, ողջութեամբ և խաղաղական մեալ յարամանական խնդրւթեամբ, ամէն:

Եւ յետ բազում հարցմանցս, յայտ լիցի մեծանձնութեանդ ձերում, իրաւի զիահմք որ յազդմանէ չարին, վասն ծովացեալ մեզաց մերոց եկն ի վերայ մեր այս մէկ երկոյ տարոյ եկեալ վիշտն և նեղութիւն և խոսվութիւնն, զի հնիր է ի սրբոցն Աստուծոյ հեռ և նախանձն, այլ վասն մեր մեզացն հատոյց մեզ Աստուծոծ, ապա փառք և գոհութիւն Աստուծոյ մարզասիրութեանն, որ կրկին ողորմեցաւ և այց արար ժողովը բեանն, և մեր երկուց սուրբ Աթոսոցն հաշտութիւն և խաղաղութիւն եղեւ ըստ առաջին սահմանին, զոր ի սուրբ Լուսաւորչէն մինչեւ այժմուս հաստատ կայր սէր և միասրանութիւնն, և երկու կողմանց թշնամիքն զլուխ ի կոր և անյայտ եղեն: Գոհանամք ի Տեառնէ մերմէ, յորժամ լոււրք դաւետեաց համբաւն՝ այնքան ուրախացաք և ցընծացաք քաղաքակցովք եկաց և բնակաց՝ այնովք որքան արժանն էր ձեր խաղաղութեան: Մանաւանդ մեծ զարմանք և ըսքանչելի իրս է յորում աւուր ի Հաւապ քաղաքն տեառնդ մերոյ սրբութեանդ խոնարհեալ ընդ Մարտիրոս վարզապետի հաշտութիւնն և խաղաղութիւն էք արարեր, և ի յայնմ աւուր այլ Ըստամզօլ եղեւ խաղաղութիւնն ընդ սուրբ հայրադեսին ամենայն հայոց կաթողիկոսին: Յետ այսմ խաղաղութեանցն մէկ քանի օր անցանելոյ կրկին չարին յարուցմանց Դամբըրնի Սէֆէրն կու գոյ կիրիտու և հետն կու թերէ յէմբ և պարաթ վասն մեռնի և յերուսաղէմայ ըստ առաջնոյն նման, և մէկի ըստակ միրիլի հախն եղեւ երկուց կողմանց կրկին տարակուս. յետոյ առեալ զէմբն և զպարաթն խօճա Վարդանն և մահտէսի խօճա Աստուծածաւուրն, խօճա Խմբրդէն և խօճա Խօսրովին, կրկին ի յիտրանա, միաբանութեամբ տեսնումք թէ զայմաղամք փաշան ինչպէս ճանապարհ կու գտնէ և ցուց կու տայ: Այս

բանիս, իրաւագիտին յայտնի է՝ որ զիւրեանքն ձայնեցաք և ասացաք՝ թէ յիրը եկեալ էք ասու, և զայմախամք փաշան պիտի մտնէք, նա՛ չի լինի թէ զմիմեանսող չարաբանէք, որ այլվե կրկին վրդովմունք կամ խոսվութիւն լինի. այնքան ջանք անէք, լինի թէ զմեռոսնի բանն ի միջէն հանէք, և յերուսաղէմ կրկին եղիազար հոգեսրտիրի անունն լինի: Խօճա Խմբրդէն և խօճա Խօսրովին ասացին խօճա Վարդանին և մահաւէսի խօճա Աստուծածաւուրն թէ յառաջ մինչև օր զուք չի զնաք ի փաշան կամ ի քեահաեան, նա՛ մեք չէմք երթար ի փաշան կամ քեահաեան, ձեր զնաւուն յեայու ապա թէ մեք այլ կ'երթամք: Ստոյգ որ հինգ վեց օր չի զնացին, մինչեւ օր խօճա Վարդանն և խօճա Աստուծածաւուրն զնացին ի փաշան. այնպէս ճէ վապ տրվիր՝ թէ նոցաթագւորն խաղիչարիփ է տվիր, մեք վէզվիր ազէմին յարկ կ'անեմք, ձեզի հոգ չէ: Յետ վեց աւուր ապա թէ զնացին աճամշնիրն քեահային մօտն, ասեր է՝ թէ ձեզի կրկին յէմբ մի կու տամք որ համբիչարիփն և թագւորին հրամանն տեղին զննէ: Մինչ ի յայտ խորհրդեանն էին, հոգեսրտիրուն ըստամզօլու զիր եկաւ՝ թէ մեք ի հոս կրկին խաղաղութիւն արարաք, և երկուց կողմանց զիր ուղարկեցաք առ եղիազար հոգեսրտիրուն որ զայցէ ի Ստամզօլ կամ ի Պուրսա, որ զիրեարս տեսանեմք: Եւ մեք այլ ի հոս կրկին յետրանա, քահանայիւք և ժողովրդեամք, զզոքա հետ միմեանց հաշտեցուցաք, որ զնան ի Ստամզօլ, այլ հետ մէկմէկի աւել պակաս խօսք չանեն ի գուռն արքունի: Այսպէս եղեւ առաջի մեր և ամենեցուն, և թէ աւելի կամ պակաս այլեալ խօսիւք զիր զայ՝ չաւատաս, ուրազան հայրգ մեր, ողջ լեր ի Տէր:

Զար ևս լոհցաք ի տեղս՝ թէ պարսն Ապրօ Զէլէպին այլ զիր է ուղարկեր հրամանուցց՝ թէ զնաս ի Ստամզօլ և խաղաղութիւն անէք ընդ միմեանց, և մեք այլ կրկին զիր զրկեցաք Զէլէպուն աղաշանօք, ծանուցաք մի ըստ միոջէ երկուց կողմանց հաշտութեան և խաղաղութեան, զի նաևս կրկին զրեսցէ վասն հաշտութեան և բանի ճշմարտութեանն. վասն զի լսեցաք թէ Վարդանն յԱլի աղան զրգեալ է, այլ իմ կերպիւ զիր զրէ զրկէ այնր կողմն, և Զէ-

լեպուն այլ ևս հանդիւչ հասկացուցել է: Չեմք գիտեր թէ ըստոյգն ինչ է զրեր, ապա մեք Զէլէպու ըստուկն զրեցաք և ծանուցաք մի ըստ միոջէ. թէ այլ ուրիշ կերպիւ զիր կամ խապար գայ՝ նա չաւատաս. ըստոյգն այս է զոր ծանուցաք. յոյս ունիմք Աստուծոյ որ նա այլ մարզու չաւատայ և զիսաղաղութիւն կամենայ: Կրկին նուաստ ծառայ Յոհան եպիսկոպոսէ յայտնի լիցի սրբազն տեառնդ իմոյ, այն խաղաղութիւնն որ յառաջադոյն եղեր էր ի Ատամալու, յետ մէկ քանի աւուր մեք այլ ի Ստամպօլ գտվաք, և լսեցաք խիստ ուրախացաք, և մեք յիստամպօլ լիքն յառաջագոյն զիր գրեցաք զրկեցաք յիտրէնու և Ուռումէլու վերայ ամենայն տեղիս զաւետեաց և զհաշտութեան համբաւն և պատուիրեցաք երկուց կողմանց այլ, զի ընդմիմեանս հաշտութիւն արասցեն, և սիրով ի սուրբ պատարագն յիշեցեն երկուց հայրապետացդ զսուրբ անունսդ որ աշխարհս ամենայն խնդան և ուրախանան քրիստոնեայքն, և մեք զայն երկու սուրբ Աթոռացն ծառայեմք, այսինքն սուրբ էջմիածնայ և սուրբ յերուսալէմայ, զի ոչ կարեմք որոշել ի միմեանց, քանզի մեր հոգեսոր ծնօղք են, ոչ կարեմք ուրաստ լինել երկոքեանն, մանաւանդ և որպէս զբիր երկու չաւացս մեր դիտեմք: Աղաչեմք, աղաչեմք զքեզ, հայր սուրբ, վասն Աստուծոյ մի անտես առներ զինդրուածս մեր, ողորմեա և խնայեա մեր տառապեալ հայոց ազգիս: Որպէս ի սուրբ Լուսաւորչէն մինչև ի նախնիքն մեր, և ի նախնեացն առ մեզ հաստատ կայր, խնդրեմք որ այլվի այնպէս խաղաղութիւն առնես որ հաստատ մնասցէ: Հայր սուրբ, խնդրեմք ի հրամանուցդ որ զանդրագարձ թղթիս շուտով հասուցանես ծառայիցդ, քանզի կարօտ և փափաք եմք սուրբ գրիդ և օրնութեանցդ. ողջ լեր ի Տէր: Գրեցաւ թվին ՌՃՃԶ (= 1667) հոկտեմբեր ամսոյ է. օրն երկուշարթի:

ԽԵ

(Երուսալիմի ուխտաւորք Երուսաղեմին առ Եղիազար կարողիկոս ի Կիպրոս) (*):

Պերճապատիւ և գերամեծար, կորուգաւրան և յոքնահանճար հոգեսոր և բազմերախտ

(*). Ընդորինակութեան մէջ նամակիս վերնազիրն է. «Եյս զիր յերուսաղէմ, եկն առ մեզ ի կիպրոս՝ յուխտաւորաց ըստամպոյց չորից բարեկամաց, կնքիւք իւրեանց. թվին ՌՃՃԶ»:

հօր մերոյ տէր Եղիազար քաջ կաթողիկոսի և աստուածաբան հայրապետի՝ ի քո արքայարնակ սիրեցեալ քաղաքի լիալ ուխտաւորացու, մանաւանդ տէր Ախմէնէնէն, մահատիսի Շէլրուն, Դայալուխողատէ մահատիսի Աստուածատուրէն, մահատիսի Թորոսէն, Խորասանձի մահատիսի Տատուրէն և այլ առ հասարակ ամենայն որդիացելոց ի քէն, յոյժ կարօտիւ և յեռափափաք տեհչմամբ երկրպագութիւն մատուցանեմք զետնամած զիմօք և արտասուասոր աչօք, և համբուրեմք զսուրբ գարշապարդ և զաջդ և ժուկովի խնդրեմք և աղերսեմք և թախանձեմք, հայր սուրբ, զոնեա վասն Աստուծոյ խղճարով ի մեկ և զայլ ամենայն միաւխորհուրդ և միաբան ժողովուրդս մեր, որ յար կախեալ կամք զէմ երեսաց քոց ըգցայգ և զցերեկ, և ոչ կարեմք տեսանել զօր գառնութեան, և ոչ ժուժեմք կեալ առանց քեւ և թէ զինչ զործեսցուք ոչ զիւտեմք: Վասն որոյ և զու, ո՛ հայր պատուական, անսա՛ անարժան օրդեկաց քոց, լուհալ առ հասարակ ամենայն ժողովրդականաց, ո՛րպէս պահանջեն զօէր և զիսաղաղութիւն առ Յակոբ կաթողիկոսն և առ Մարտիրոս վարդապետն, որպէս և զրեալ են զիր սէխտիւ և զաշնազրութեան, զէրէ մեք ևս հաւանեալ հաճեցաք զայտպիսի պայման երկոցունց Աթոռոց հաստատութեան սիրոյ և միաբանութեան, զի մի շիջցին ճրագունք հայոց ազգիս: Վասն որոյ և զու զիշեալ ըստ մեզ՝ խաղաղեա ի խոսովութենէ քումէ ողորմէլով մեզ: Քանզի յիտրաժանման քո ի մէնչ, յորժամ եկն Մարտիրոս վարդապետն ասոտ, առաւել տրամութեանց այլ ոչինչ իմացաք՝ ո՛չ ժամ, ոչ աղօթք, ոչ պահք, ոչ զատիկ, ոչ պատարագ, ոչ քարոզ և ոչ այլ ինչ. քանզի շփոթեալ աղմէկեցան սիրտք մեր և խորհուրդք, յամենայնէ յուսահատեալք: Վասն որոյ աղաչեմք զքեզ, հայր սուրբ, միջնորդ ունելով ընդ մեզ զբարեխօսութիւն սրբունոյ Աստուածածնին, զի մի անտես արասցես մեր, այլ լսելով լուիցիս ազաշանաց մերոց և արասցես սէր և հաշտութիւն և միաբանութեան առ ատելիս անձինքո, ըստ Տէանի համանի թէ՝ Երանի խաղաղաբարաց և այլն: Այս բաւեսցի ի նըւըւատիցս և զնշմարիտն և զյանախազոյնն լուիցիս որդեկացն քոց: Ողջ լիցիս ի պարծանս մեր, ամէն: Դարձեալ ընդ նոցին և սէմէրձի հաճի կիւրեղն, թարզի պաշի հաճի Աէֆէրն զաջդ կու համբուրեն (1667):

Համարակեց՝ Ա. Յ. Ն.